Հ.Հ.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

<<ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ>>

ՀՈԱԿ

Р.А. АРАТСКАЯ ОБЛАСТЬ

МЭРИЯ Г. АРТАШАТ

<<БИБЛОТЕЧНАЯ СИСТЕМА>>ОНТО

Ք.ԱՐՏԱՇԱՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆ7

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԶԱՆ ՏՈՆՈՅԱՆԻՆ

Խորին շնորհակալությունս եմ ցանկանում հայտնել ՀՀ գրադարանային Ասոցիացիայի նախագահ տիկին Ռուզան Տոնոյանին, փոխնախագահ Ռաֆիկ Ղազարյանին, ասոցիացիայի անդամ Գայանե Կարապետյանին, որոնց հետևողական աջակցությամբ վերաբացվեցին Արտաշատի քաղաքային գրադարանի մասնաճյուղերը:Վերջիններս չէին գործում 2016 թ-ի հունիս ամսից մինչև սույն թվականի մարտ ամիսը:Դժգոհություններ էինք ստանում ընթերցողներից՝ դպրոցականներից, ուսանողներից, վերոհիշյալ գրադարանները բացելու խնդրանքով:Քանզի ցանկացած ուսումնական արդյունավետ աշխատանք անհնար է պատկերացնել առանց գրադարանի,որը նպաստում է ուսումնագիտական գործընթացի կազմակերպմանը:Եվ մասնաճյուղերի բացումը հնարավոր եղավ միայն մեր՝ թույլ տվեք ասել բարեգործ, բարեհոգի և նպատակասլաց աջակիցների շնորհիվ: Վերջիններս, քաջ գիտակցելով գրականության դերն ու նշանակությունը, մեր քաղաքացու, դպրոցականի, ուսանողի, թոշակառուի, ինչու չէ նաև թոթովախոս մանկան կյանքում,իրենց ներուժով սատար կանգնեցին ամրապնդելու ընթերցող-գրադարան կապը: Քանզի գրադարանը միայն սպասարկման դեր չի կատարում: Այնտեղ կազմակերպվում են օրացույցային տոներին համապատասխան միջոցառումներ, ինպես նաև անցկացվում են նորատիպ գրքերի շնորհանդեսներ, որոնց միջոցով ընթերցողը ծանոթանում է ոչ միայն գրքի հետ,այլ նաև գրողի հետ, կենդանի շփումն ապահովում է ճանաչել և յուրովի մեկնաբանել տվյալ ստեղ- ծագործությունը, նպաստում է նրանց աշխարհաճանաչման և անհատական մտածողության զարգացմանը: Գրադարանը հոգևոր շտեմարան է և նույնիսկ պատերազմի դժվարին տարիներին, չխամրեց նրա դերակատարությունը: Գրադարաններն այն կրթավայրերն են,որտեղ պահպանվում են մարդկային մտքի հիշողությունները: Գրադարանի առաջնային խնդիրն է այդ հիշողություններն հասանելի դարձնել ընթերցողին, ուստի անհրաժեշտ է սպաասարկելի դարձնել գրքային ունեցվածքը: Ի վերջո ընթերցանությունը երկրի ապագան է:

Տնօրեն Ա.Պետրոսյան